«Հաստատում եմ»

«ՀԱՅՆԱԽԱԳԻԾ» ԲԲԸ

տնօրեն՝ Գ.Ս. ԱԶԻԶՅԱՆ

07. 11. 2025թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԻԹՅԻԱՆ ԿԱՐԾԻՔ

ԲԱՀԻԵՀ ՌՈՍՏԱՄ ԱՖՇԱՐԻ

«ԹԵՀՐԱՆԻ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԼԱՆԴՇԱՖՏՈՒՄ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ» թեմայով ատենախոսության վերաբերյալ, որը ներկայացված է ԺԸ.00.01-«Ճարտարապետություն» մասնագիտությամբ ճարտարապետական թեկնածուի գիտական աստիճանի հայցմանը:

Թեմայի արդիականությունը

Թեմայում դիտարկվել է Թեհրանի կենտրոնական պատմական միջուկի ժամանակակից տարածքում ազգային մշակութային ինքնության պահպանման ճարտարապետահատակագծային արդի խնդիրները, որոնք առաջացել են պատմական կառուցապատումներում նորավոճ շենքերի ու շինությունների անկանոն ներթափանցումների հետևանքով: Փաստվում է, որ կառուցապատման սրընթաց արդիականացումների արդյունքում խեղվել ու վնասվել են բազմաթիվ պատմաճարտարապետական շենքեր ու համալիրներ, որոնցում ազգային պատմամշակութային արժեքների նսեմացմամբ, բացասական ազդեցություն են ունենում միջավայրի պատմականորեն ձևավորված կերպարի վրա և նվազեցնում հանրությունում սոցիալական ինքնության գիտակցումը:

Ատենախոսության արդիականությունը

Ատենախոսությունում իրավացիորեն նշվում է որ տնտեսության բուռն զարգացումների հետևանքով, քաղաքային բնակավայրերում ընթանում են բուռն ու անկանոն փոփոխություններ, որի հետևանքներից մեկն այն է, որ նախագծող ճարտարապետը մասնագիտական լուծումների թելադրողից վերածվել է անհագ պատվիրատուի հպատակ, հարկադրաբար նպաստելով նրա անզուսպ ցանկությունները կյանքի կոչելու գործառույթներին, որոնք ամենուրեք, (ինչպես և բազում երկրներում) իրականացվում են կառավարման պատկան մարմինների լուռ հովանու ներքո: Փաստվում է, որ Թեհրանի պատմական թաղամասերը բախվում են լուրջ մարտահրավերների, քանի որ արդիականությունը բախվում է պատմակամ ու մշակութային ինքնություններին, որն անընդունելի է հատկապես մայրաքաղաքի 12-րդ վարչական մշակութահեն շրջանին, որի պատմական

կերպարը ներկայիս դրությամբ զգալիորեն ստվերվել է՝ նրանում բարձրահարկերի զարգացումով և ենթակառույցների առաջացումներով: Ստեղծված իրավիճակը կարգի բերելու գործում թեզում անչափ կարևորվում նաև բնակչության մոտեցումները առկա խնդիրների ուսումնասիրման և առաջարկությունների ձևավորման ընթացակարգերում, որոնցով լույս կսփռվի ապագա ճարտարապետական պրակտիկաի և քաղաքաշինական քաղաքականության վերաձևավորման ու քաղաքային ինքնության պահպանման որոշումների կայացման ճանապարհին:

Ուսումնասիրության նպատակը

Ուսումնասիրությունը նպատակաուղղված է ձևադրել Թեհրանի 12-րդ վարչական շրջանում, 18-րդ դարից ցայսօր ընկած պատմական ժամանակաշրջանները ներկայացնող ինքնության ինտեգրման գործիքակազմ՝ պահպանելու, վերաարժեվորելու և վերակենդանացնելու քաղաքի պատմական լանդշաֆտը, առաջարկելով նոր և հին կառուցապատումների միջև ինտեգրման համապատասխան մոդել, որի միջոցով հնարավոր լինի ապահովել ընթացիկ քաղաքշինական գործընթացների իրատեսական համապատասխանությունը կայուն զարգացման սկզբունքներին: Այդ նպատակի համար առաջ են քաշվել գիտական առաջնային խնդիրները.

Ատենախոսության մեթոդաբանությունը

Ատենախոսության թեզը առանձնանում է իր բազմաբովանդակ մոտեցմամբ: Առաջին անգամ օգտագործվել է հետազոտման համալիր համակարգված մեթոդ՝ ներառելով տեղական շահառուների հետ որակական հարցում, կառուցապատված միջավայրի տարածական բաղադրիչների և ինքնությունը պահպանող դրական արդյունքների վերլուծութուն. Նաև համատեքստային ուսումնասիրություն, որն ընդգծում է պատմությամբ և մշակույթով հարուստ Թեհրան քաղաքում զարգացման և ժառանգության պահպանման խնդիրները:

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Առաջին գլխում ներկայացված են ընդհանուր տեղեկատվություններ Թեհրան քաղաքի տարածքի պատմական զարգացման մասին որոնցում ներկայացված են Թեհրանի տեղադիրքը, աշխարհագրական առանձնահատկությունները, պատմական զարգացման ու ճարտարապետական ժառանգության ձևագոյացման հանգամանքները, դրա արդի վիճակն ու պատմական կենտրոնների շուրջ առաջացած մարտահրավերները:
Ներկայացվում է քաղաքի պատմամշակույթային, ճարտարապետական զարգացումների պատմական ժամանակաշրջանների ժամանագրությունը 18-րդ դարավերջից ցայսօր: Քաղաքի ներկայիս քաղաքաշինական վիճակը ակներև է դարձնում նրանում նորակառույց թաղամասերի ճարտարապետական ու

քաղաքաշինական անհավասար պատկերը, ինչի արդյունքում վճռորոշ է դառնում քաղաքի պատմական կենտրոնի ինքնությունը պահպանելու առաջնահերթությունը, առաջնային կարգով քաղաքի պատմական կենտրոնի 12-րդ վարչական շրջանի տարածքում:

Երկրորդ գլխում տեսականորեն ներկայացված է ինքնության սկզբունքը ճարտարապետության ու քաղաքշինության համատեքստում, ինչպես նաև պահպանման քաղաքաշինական խնդիրները Թեհրանի այժմյան կառուցվածքում: Սակայն նշվում է, որ այսօր Թեհրանի քաղաքաշինությունում հաճախ առաջնահերթություն է տրվում տնտեսական աճին ու զարգացմանը, քան առկա ժառանգության պահպանմանը: Երկնաքերերն ու ժամանակակից համալիրները երբեմն ձևագոյանում են ի վնաս պատմական միջավայրերի պահպանման և ի հեճուկս ճարտարապետների ու համայնքի մտահոգ ակտիվիստների բողոքակումների, հանգեցնելով ոչ միայն տեղական համայնքների ինքնության այլև պատմաճարտարապետական հարուստ ժառանգության կորստին:

Երրորդ գլխում ներկայացվում է Թեհրանի պատմական շենքերով կառուցապատված 12-րդ վարչական շրջանը, ուր ինքնության պահպանման համատեքստում, դիտարկվում է քաղաքաշինական առանձին բաղադրիչների դերը, պահպանման, վերակառուցման կամ հարմարվողական վերաօգտագործման նշանակությունը ճարտարապետական ժառանգության շարունակականության ապահովման գործընթացում: Առաջարկված է չափորոշիչների համակարգ՝ քաղաքաշինական հետագա միջամտությունները ձևավորված միջավայրում ներդաշնակորեն ինտեգրելու, առանց քաղաքային ինքնության խաթարման, որի համար մեջբերվում են միջազգային փորձի ուսումնասիրությունները, միջազգային խարտիաները, կանոնադրություններն ու կազմակերպությունները, ինչպիսիք են ՅՈՒՆԵՍԿՕ-ն և Համաշխարհային ժառանգության կոնվենցիաները, ՄԱԿ-ի, ԻԿՈՄՈՍ-ի դրույթներն ու ուղեցույցները՝ մշակութային ինքնությունները պահպանելու և բնակավայրերի զարգացումը պատասխանատու կերպով խթանելու համար: Հերթական անգամ շեշտվում է, որ պատմական թաղամասերը ակտիվ դեր ունեն քաղաքի մշակութային եզակիությունը պահպանելու գործում և՝ ներկայում, և՝ ապագայում՝ կիրառելով միջամտությունների պատշաճ տեսակներ՝ վերանորոգում, պահպանում, վերականգնում, վերակառուցում, ռեաբիլիտացիա ռեգենեռացիա: Այս ամենը ճարտարապետների, քաղաքաշինարարների, քաղաքային բնակավայրերի ապագայի հարցերով այլ պատասխանատուների համար մարտահրավեր է՝ քաղաքային ինքնության ճանաչման ու կարևորման գործառույթներում:

Ուշադրության է արժանացվել նաև հանրային տարածքների քաղաքաշինական ու ծավալատարածական կազմակերպմանը, որպես հանրային կյանքի առողջացման գոտիներ և ինքնության պահպանման գործիքներ:

դիտողություն

Մոտ երկու տասնամյակ առաջ առիթ եմ ունեցա այցելել Թեհրան ու մասնագիտական հայացքով զարմանալ քաղաքի նույն 12-րդ վարչական շրջանի պատմական կառուցապատման շինությունների արդի վիճակին ու նրանց պահպանման անխնամ վիճակից, որի արդյունքում բոլոր բազմահարկ շենքերի ճակատները համատարած աղավաված էին ստորին հարկերում խծկված փոքրաչափ ու բազում խանութ-կրպակների անկանոն ու համատարած պաստառներով, տարաձև ծղնելուզներով ու օդամղիչ ինժեներական խողովակաշարերով: Զարմացած էի նաև Հասանաբադ հրապարակի պարագծով եռահարկ ու շգեղ կառույցներից մեկի վրա վեր խոյացած բազմահարկ ու անհեթեթ ապակետուփով: Եվ մտքովս անգամ չեր անցնի, որ երկու տասնամյակ անց, գրեթե նույն վիճակում կհայտնվի Հայաստանի մայրաքաղաք Երևանի պատմական կառուցապատումը: Կարծում եմ ցանկալի կլիներ ուսումնառությունում անդրադարձ կատարել նաև բազմահարկ շենքերի ճակատային աղավաղումներին ու դրանց շտկման հնարավորություններին:

Այսքանով հանդերձ ներկայացված ատենախոսությունը հավուր պատշաճի հասունացած է և ուղղված բոլոր ճարտարապետներին նաև ոլորտը կարգավորող մարմիններին, որոնք անմեղսակից չեն հակամշակութայն ստեղծված իրավիճակներին:

Եզրակացություն

ԲԱՀԻԵՀ ՌՈՍՏԱՄ ԱՖՇԱՐԻՆ-ի

«ԹԵՀՐԱՆԻ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԼԱՆԴՇԱՖՏՈՒՄ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ» թեմայով ատենախոսությունը անվիճելիորեն հանդիսանում է ճարտարապետության ոլորտում պահանջված գիտական հույժ կարևոր ուսումնասիրություն, լիովին համապատասխանում է գիտական աստիճանի շնորհման կարգի պահանջներին և հայցվորը արժանի է ԺԸ.00.01- “ճարտարապետություն» մասնագիտությամբ գիտության թեկնածուի աստիճանի շնորհման:

Ս.Հ.ՔԱԼԱՇՅԱՆ
«Հայնախագիծ»ԲԲ ընկերության
ճարտարապետական արվեստանոցի ղեկավար,
ՀՀ Պետական մրցանակի դափնեկիր,
ՀՀ վաստակավոր ճարտարապետ